




ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԵՍ


ՏԱՍՆՈՐԵԱՅ

Գիտական, Գրագիտական, Արուեսագիտական,
եւ Մանկավարժական



1902 ՓԵՏՐՈՒԱՐ I — ԹԻԻ II

ԻՏՊԱԳՐ. ՆՇԱՆՆԿ. ՊԵՐՊԵՐԵԱՆ





ՀԱՆՔԻՍ
ՏԱՍՆՕՐԵԱՅ

هانراكيداق
مجموعه علوم

HANRAKIDAGUE
JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 11

ՓԵՏՐՈՒՄ 1902

ՍՆԱՊԱՐԾ ԾԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



տեսնօք անտառի մը մէջ
կը գտնուէր սրածայր տե-
րեաներով ծածկուած պզտիկ
ծառ մը։ «Ա՛հ, կ'ըսէր օր
մը, դրացիներս շատ եր-
ջանիկ են. անոնք աղուոր
տերեաներ ունին՝ որոնք մարդուս հաճոյք
կ'առթեն։ Մինչդեռ իմիններս՝ ասեղի կը
նմանին, ու ասոր համար մէկը չի համարձա-
կիր ինծի մօտենալ. կ'ուզէի իմ մօտ գտնը-
ւող ծառերէն աւելի աղուոր տերեաներ ու-
նենալ, տերեաներ՝ որոնք ամբողջ ոսկիէ ըլ-
լային»։

Կը մթնէ, պզտիկ ծառին վիշտը մեղմա-
ցած էր քիչ մը, ու առտուն, երբ լոյսը
ծագնցաւ՝ բոլորովին կերպարանափոխ եղած
էր։ «Ի՛նչ երջանկուծ իւն, աղաղակեց, ահա

ոսկիով ծածկուած է տերեաներս, ու անտա-
ռին մէջ չի կայ ծառ մը՝ որ իմ փայլուն
դեղին հագուստները ունենայ։

Բայց, գիշերուան մօտենալուն, ծառին
մօտ կը հասնի նիհար ձեռքերով, երկայն
մօրուքով մարդ մը, կունակը խոշոր պարկով
մը։ Իր շուրջը երկջուտ նայուածք մը կը նե-
տէ, և տեսնելով որ մէկը զինք չգիտեր,
ոսկի տերեաները՝ կը բրցունէ, կը լեցնէ
պարկին մէջ, ու կը փախչի։

«Ա՛խ, ըսաւ պզտիկ ծառը, կը մեղքնամ
իմ այն ոսկի տերեաներուս՝ որոնք այնքան
փայլուն կը շողային արեւուն տակ։ Բայց ա-
պակեայ տերեաներն ալ՝ ոսկիներուն չափ
փայլուն պիտի ըլլային, կ'ուզէի ապակիէ
տերեաներ ունենալ»։

Իրիկուան քնացաւ, ու հետեւեալ առտու
նորէն կերպարանափոխուած էր. իր ամէն
օտտերէն կախուած կ'երևային ապակեայ
սաղարթներ։ «Ա՛հ, ըսաւ, ահա՛ գեղեցիկ
պղնձոտ մը ինծի, դրացի ծառեր չունին իմ
աղուոր կերպարանքս»։

Բայց, սև աւաթի կը զիգուին երկնքին
վրայ, հովը կ'ելլայ, փոթորիկը կը փրթի,

ու նայիս ամէն ապակեայ տերեւները կը կոտրեն :

«Աւաղ, մըմնջեց հառաչելով, սնապարծ պզտիկ ծառը, շատ չքեղ էր այն տերեւները՝ որոնցմով կը պարծենայի, բայց շատ դիւրարեկ դժբաղդաբար: Շա՛տ աւելի պիտի արժէր ինծի համար՝ կանաչ, աղւոր, հոտաւէտ տերեւներու հազուադէպ մը»:

Իրիկուան ազտիկ ծառը քնացաւ, ու հետեւալ առտու իր փափաքածին համեմատ եղած էր: Բայց՝ իր թարմ տերեւներուն հոտը՝ առ ինքն կը ձգէ այծերը, որոնք կ'ուտեն անոնք՝ իրենց ետեւի տոտիկներուն վրայ կենալով՝ կ'ելլան մինչեւ ծառին դագաթը, և բոլորովին զանիկա տերեւներէն կը մերկացնեն:

Այն ատեն ծառը՝ ճանչցաւ իր գոռոզ փառասիրութեան ունայնութիւնը: Իրիկուան քնացած ատեն, կը ցաւ իր առջի տերեւներուն վրայ, ու առտուն կ'ուրախանայ՝ տեսնելով անոնց իր ճիւղերուն վրայ վերերելիլը: Այդ տերեւները ո՛չ ոսկիի փայլ ունէին, ալ ապակիի լուսալիւ թափանցկութիւնը, և ոչ իսկ հոտաւէտ տունկերու ձգողութիւնը՝ նշնին, այլ անոնք հաստատուն են, ալ մէկը չպիտի դայ զանոնք իր վրայէն փրցնելու, ու ամբողջ եղանակին մէջ՝ անոնք պիտի 'կրէ իր վրան ուրախ, երջանիկ:

Թարգմ. ՎԱՀՐԱՄ Յ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ



ՄԱՆԿԱԿԱՆ «ԵՐԳ ԵՐԳՈՅԸ»

Անուշիկ Յիսուս:

Մայրիկս ինծի Մնունդին պատմեց թէ գրեզ աղքատ՝ բայց բարի մայր մը ծներ է իջեւանի մը անշուք մսուրին մէջ: Ո՛հ, եթէ ես հոն ըլլայի, քեզ իմ թոմպուլիկ ու կակուղիկ թեւերուս վրայ կ'առնէի, պզտիկ թեւերս կախօրան, օրոր օրոր կ'երգէի ձայնով մ'անուշ մանկական:

Մինիսիկ Յիսուս:

Ինչպէ՞ս հոն բնակող մեծատուն հարուստները քեզ չոր յարդի վրայ պառկեցուցեր են, անգութ անգգայ:

Մայրիկը ինծի կաղանդին առթիւ նոր ու գեղեցիկ լւթեր ու շորեր կարեց, հայ-

րիկս ալ շուկայէն ինծի խաղալիքներ, ժամացոյց, կօշիկ, գլխարկ եւ շաքար գնեց: Եթէ դուն ալ քովս ըլլայիր, քեզի ալ կուտայի անոնցմէ եւ մէկտեղ կը խաղայինք ու միասին ձեռք համըրել կ'երթայինք:

Նոնուշիկ Յիսուս:

Անգամ մը մայրիկը ինծի պատմեց թէ՝ ինչպէս տասներկու տարեկան հասակիդ մէջ տաճարը սեւ լաթեր հագնող վարդապետներուն հետ վիճարաներ ես. ո՛հ, Յիսուս, ինչպէ՞ս չվախցար այդ մօրուքով սեւ մարդերէն, եթէ ես քու քովդ ըլլայի, բոլոր մը անգամ չէի թողուր որ անոնց քովդ կենայիր. Հապա մայրիկդ որչափ տրտմեցուցեր ես, որ երեք օր քեզ փնտռեր են, եթէ ես ըլլայի քեզմէ բնաւ չէի հեռանար, և մանկական թոթով խօսքերուդ ես ալ մտիկ կ'ընէի:

Պաշտելի Յիսուս:

Մայրիկս նաեւ պատմեց թէ, դու փոքր տղաքները շատ կը սիրես եղեր, զանոնք գրկիդ մէջ առնելով օրհներ ես, Անուշիկ Յիսուս:

Եկուր դեռ ես չմեծցած զիս ալ գրկիդ մէջ առնելով թեւատարած օրհնէ՛ անոյշ բերնիդ մեղրածոր երանութիւններովը: Ա՛խ, մէկ անգամ, ինչ կ'ըլլար, իմ թարմ ու կարճուկ թեւերովս քու սիրունիկ պարանոցէդ պլլուէի, եւ համբոյրներուս մէջ քեզ թաղէի: Այո՛, դու մանկութիւնը շատ սիրած ըլլալու ես, որ Աստուած մը ըլլալով մանուկ մը ըլլալը փառք սեպեցիր. ամենագէտ՝ ինծի նման տգէտ եղար, ինծի պէս լացիր, եւ անուշեղէնի մը համար ուրախացար:

Փարելի Յիսուս:


Հապա ի՞նչ էին այն բոլոր գրկանքներն ու չարչարանքները որոնք սիրայօժար կրեցիր. դու ամենուն բարձ ու հանգիստ տրուող առանց գլխու բարձի մնացիր. ա՛խ, երանի թէ իմ քովս ըլլայիր, քեզ՝ դեղձանիկէն, սոխակէն ու սիրամարգէն նախշուն ու կակուղիկ փետուրներէն փափուկ բարձ մը կը պատրաստէի եւ կամ թեւերս բարձ ըրած անոնց վրայ կը հանգչեցնէի:

Հէք Յիսուս:

Հապա վերջին տխուր վայրկեաններուդ ծարաւ ալ մնացիր. մեր աղբիւրներուն, մշտահոս գետերուն ու կարկաջասահ առու-

ներուն, լայնատարր ծովերու, ովկէաններուն ջուր հայթայթող ամենակարող Աստուածոյդ կաթիլ մը ջուրն ալ շատ են տեսեր, անգութ մարդիկը: Ա՛խ, եթէ ես ըլլայի, պաշտելի Յիսուս, սափորս առած մեր արծաթափայլ աղբիւրէն զուլալ ջուր կը բերէի ու քեզի համար պաղուկ օշարակ պատրաստելով կը խմցունէի:

ԱԿԻԼԻՆԵ



ՄԱՆԿԱԿԱՆ ՌԻՂԵՐՁՆԵՐ

ՊՁՏԻԿ ԼՈՒՍԻՆԻՆ

Ո՛ Լուսին,

Այն ծաղկունք որ նոր բուսնին,
Առտուն, քոչնիկք երբ խօսին,
Երբ սեւ ու մուգ կը խուսին,
Ի՞նչ կ'ըսեն քեզ, ո՛ Լուսին:

Երբ գիրք առած՝ կը կարդաս,
Ջանաս սուրիլ շուտ՝ քո դաս,
Կամ պոսոյսի երբ կ'երթաս,
Լուսին՝, արդեօք ի՞նչ կ'զգաս:

Երանի՛ քեզ մանկիկ դեռ՝
Կեանքը ծաղիկով ե փրքեր,
Աստուած՝ քեզի ե ժպտեր,
Լուսին՝, ձօնեմ քեզ վարդեր:

Ապրե՛ զուարթ եւ անցաւ,
Ի՛նչքա՛ մանկութիւնքդ անցաւ՝
Յիշե՛ փոքրիկ այս տղեր,
Ձո՛ւս հապնեալի իմ տղեր:

ԼԵՒՈՆ ՍՐԱՊԵԱՆ



ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Դպրոցի մը մէջ փոքր տղայ մը կենդանաբանութեան դասին մէջ կարգին գլուխը անցաւ, վարժապետին հարցման ճշգիւ պատասխանած ըլլալուն համար, Երեկոյին մեծ ուրախութեան մէջ էր:


— Ի՞նչ էր վարժապետիդ հարցումը, հարցոյց հայրը:

— Հարցոյց թէ կատուն քանի՞ ոտք ու-

նի. « Երեք հատ ունի » պատասխանեցի եւ ալ:

— Է՛, այդ պատասխանիդ համար կարգիդ գլուխը ելար:

— Այո, որովհետեւ միւս տղայքը « Երկու հատ ունի » ըսած էին:



ՏՂՈՒ ՄԸ ԵՐԱՋԸ ԼՈՒՍԱՏՈՒԻ ՄԸ ՎՐԱՅ

(Զարլս Տիրքնսի մէկ գործն է, զոր Թարգմանաբար կը նուիրեմ « Հանրագիտակ » ի փոքրիկ բարեմամներու: Զարլս Տիրքնս, հռչակաւոր անգղիացի վիպագիր, ապրած է 1812-1870. մէկն է ինքնօգնութեան ախոյեաններէն: Աղքատ ընտանիքի մը զաւակ՝ Զարլս խրկուեցաւ, նախ՝ շաքաւական վեց շիլին շահելու համար կօշկաներկի մեքերանոցի մը մէջ: Բոլորեցան այսպէս երկու տարիներ, սակայն այս գործը անտանելի էր իրեն համար. քանզի անիկա՝ կարողացած ըլլալով բաւական զբոյժ պարագայ ժամերուն մէջ, ուսեալ եւ ականաւոր անձնաւորութիւն մը ըլլալու ծգտումը որդէգրած էր արդէն եւ ինչ որ յաջողեցաւ վերջապէս յոյժ տաժանելի ընծացք մը փոխելէ վերջ սակայն:

Ժամանակին մանուկ մը կար, որ կը չըջէր թափառակցան հոս հոն, եւ կը խորհէր շատ մը բաներու վրայ: Սա ունէր քոյր մըն ալ, որ դեռ շատ փոքր ան ալ, եւ իր սերտ մշտերիմը: Ասոնք կը զարմանային միշտ դիտելով ծաղիկները, երկինքի կապոյտը կարկաջահոս վտակը, եւ նաեւ կը զարմանային բարի Աստուծոյ սիրոյն եւ զօրութեանը վերայ՝ զորո շինած էր սիրայօժար: Իրենք իրենց այսպէս կ'ըսէին յաճախ. « Ենթադրենք թէ աշխարհի վրայ բոլոր մանուկներ մեռնէին, այն ստեն այս ծաղիկները, վերտակը եւ երկինքը սո՛ւգ պիտի ընէին, սեւեր պիտի հագնէին արդեօք »: Կը հաւատային թէ պիտի ընէին. որովհետեւ, անոնք կ'ըսէին, կոկոնները ծաղիկներուն զաւակներն են, բլուրն ի վար թաւալող հեղատաճ վերտակը՝ սա մեծ գետին փեղբիկն է, եւ երկինքի մակերեսին սա յայլուն կէտերն ալ մեծ արեւներուն փոքրիկներն ըլլալուն անշուշտ: Եւ այս ամէնը պիտի տիրէին տեսնելով թէ ո՛վ եւս են իրենց խաղընկերները, մարդոց որդիները:

Փայլուն, պսպղուն լուսատու մը սովոր էր փայլիլ ամէն իրիկուն գերեզմանոցէն վեր եկեղեցիին գմբէթին վրայէն: Խոշոր եւ շատ փայլուն էր եւ ամէն գիշեր կ'սպասէին անոնք (քոյր եւ եղբայր) անոր երեւնալուն՝ ձեռք ձեռքի տուած լուսամուտին մօտ: Ո՛վ որ առաջին անգամ կը տեսնէր զայն՝ կը պօռար. « Կը տեսնե՛մ, կը տեսնե՛մ »: Եւ յետոյ երկուքը միասին կը նայէին: Եւ այսպէս սերտ բարեկամութիւն հաստատեցին լուսատուին հետ. այնպէս որ ամէն երեկոյ անկողին երթալէ՝ առաջ կը դիտէին երկինքը, թէ արդեօք պայծա՞ռ է: Եւ երբ այլ եւս կը քնանային կ'ըսէին « Աստուած օրհնէ լուսատուն »:

Սակայն դեռ քոյրը շատ փոքր էր, այնպէս որ կ'թոտեցաւ եւ այնչափ տկարացաւ որ այլ եւս չէր կրնար սպասել, լուսամուտին մօտ գիշեր ատեն. այն ատենը եղբայրը միայն դուրս կը նայէր լուսամուտէն եւ տեսնելուն պէս անկողինն մէջ պառկող քրոջ դալկահար դէմքին դառնալով կ'ըսէր. « Կը տեսնեմ լուսատուն »:

Վերջապէս անողոք ժամանակը շուտ հասաւ, երբ այլ եւս եղբայրը կը նայէր միւսակողմէն, անկողինն մէջ չի կար այլ եւս փոքրիկ քոյրը. այլ գերեզման մը գերեզմաններու մէջ: Եւ լուսատուն իր ճաճանչները կը խրկէր վար եղբօրը արցունքոտ աչքերուն: Եւ հիմա ճառագայթները այնչափ փայլուն էին, որ երկրէն դէպ երկինք լուսաշող արահետ (ընդարձակ ճամբայ) մը կը կազմէին:

Տղան երբ միամիտակ անկողին կ'երթար շարունակ լուսաւորին վրայ կ'երազէր, և կը տեսնէր նաեւ որ կարգ մը մարդիկ լուսափայլ արահետէն վեր կ'առնուէին հրեշտակներու միջոցաւ: Լուսատուն ցուցուց անոր (տղուն) ուրիշ աշխարհ մըն ալ լուսով ողողուն, ուր շատ մը հրեշտակներ ալ կ'սպասէին զանոնք դիմաւորելու համար: Այս բոլոր սպասող հրեշտակները յառած իրենց փայլուն աչքերը կը դիտէին այն մարդոցը որ կ'առնուէին վեր: Հրեշտակներէ ոմանք պլլուելով մարդոց վիզը համբուրեցին զանոնք փափկօրէն, եւ գացին անոնց հետ դէպ ի լուսոյ արահետը, եւ այնքան երջանիկ անոնց ընկերակցութիւնը որ տղան

փղծկեցաւ յանկարծ անկողինն մէջ ուրախութենէն:

Կային նաեւ կարգ մը հրեշտակներ ալ որ չէին երթար անոնց հետ որոնց մէջէն նա կը ճանչնար մէկ հատը միայն, քրոջ հրեշտակը: Համբերատար քոյրը որ ժամանակին հալած մաշած էր իր անկողինն մէջ, այժմ փառաւորուած փայլուն ու շողշողուն իր մօտը գտաւ իր քոյրը հոծ բազմութեան մէջէն:

Քրոջ հրեշտակը առտամսեցաւ լուսաւորին մուտքին մօտ, եւ այդ մարդիկը դէպի հոն առաջնորդողին ըսաւ. « Եկա՞ւ իմ եղբայրս », ու ան ըսաւ « Ո՛չ »: Երբ տեղան երկնցուց իր բազուկները քոյրը գլուկելու և գոչեց « Ո՛հ քոյր իմ, ես հոս եմ, ա՛ռ զիս » եւ ահա գիշեր էր, ու լուսաւորը կը փայլէր դեռ սփռելով իր ճաճանչները սենեակէն ներս, տղուն արտասուալից դէմքին վրայ:

Այն ժամանակէն ի վեր տղան կը դիտէր լուսաւորը կը նկատէր զայն իւր իր հայրենիքը ուր պիտի երթար, երբ գար ժամանակը. կը խորհէր թէ ինքը այս աշխարհի չէր պատկանէր միայն՝ այլ միւս աշխարհին ալ քանի որ քրոջը հրեշտակը հոն գացած էր:

Այս տղան փոքրիկ եղբայր մըն ալ ունեցաւ որ, դեռ լեզուն չբացուած, մեռաւ: Դարձեալ տղան կ'երազէր շարունակ այն դռնբաց լուսաւորին վրայ, այն հրեշտակներու բազմութեան և մարդոց խումբին վրայ, ու նաեւ այն հրեշտակներու շարքին վրայ որոնք աչքերնին յառած կը նայէին մարդոց: Ըսաւ կրկին քրոջ հրեշտակը առաջնորդին. « Հօ՞ս է իմ եղբայրս », եւ անիկա պատասխանեց. « Ո՛չ թէ ան, այլ ուրիշ մը »: Դարձեալ եղբայրը գոչեց բազկատարած. « Ո՛հ, քոյր իմ, ես հոս եմ, ա՛ռ ինձի »: Եւ անիկա դարձաւ ժպտեցաւ անոր. — անկողնոյ մէջ լուսաւորն ալ կը փայլէր:

Տղան մեծցաւ երիտասարդ եղաւ, և իր գիրքերովը կ'ըզբաղէր: Ծեր սպասաւոր մը եկաւ և ըսաւ անոր. « Քու մայրդ մեռաւ, և ես կը բերեմ իր վերջին օրհնութիւնը իր սիրելի զաւկին »: Դարձեալ անիկա տեսաւ լուսաւորը երազին մէջ և բոլոր երկնային ընկերակցութիւնները. ըսաւ իր քրոջ հրեշտակը՝ առաջնորդին. « Եկա՞ւ իմ եղբայրս »:

և ան ըսաւ, « Գու մայրդ »: Այն ատեն ուրախութեան ահեղ աղաղակ մը թնդաց, որովհետեւ մայրը միացած էր դարձեալ իր երկու զաւակներուն: Տղան, որ հիմա մեծ մարդ եղած էր, երկնցուց իր բազուկները և գոչեց. « Ո՛հ, մայր իմ. քոյր իմ, եղբայր իմ, հոս եմ ես, զիս ալ առէ՛ք »: Անոնք պատասխանեցին. « Դեռ ո՛չ » — եւ լուսաւորը կը փայլէր:

Երիտասարդը աւելի մեծցաւ. մագերը ձերմկեցան, կը նստէր աթոռին վրայ կրակին մօտ տրտում ու տխուր. արցունքներ կը հոսէին երբ լուսաւորը կը բայուէր: Դարձեալ երազին մէջ իր քրոջ հրեշտակը ըսաւ. « Զո՞ւն է իմ եղբայրս » և ան ըսաւ. « Ո՛չ, բայց իր մէկհատիկ աղջիկը »: Երբ տեսաւ մարդը դեռ նոր գացող զաւակն ալ, ըսաւ. « Իմ աղջկանս գլուխը քրոջս կուրծքին վրայ է, բազուկները մօրս վզին վրայ, և ոտքերուն քովն է հին ատենուան անխօս մանկիկը՝ եղբայրս, եւ ես չեմ կրնար բաժնուիլ ասկէ. օրհնեալ ըլլայ Աստուած »: — Լուսաւորը կը փայլէր միշտ:

Այսպէս ժամանակուան տղան երիտասարդ և վերջապէս ծեր մարդ եղաւ, այլ եւս ծիծաղիտ այտերը կնճռոտեր էին, քայլերը՝ ուժասպառ և զողգոջ, եւ ինք կորաքամակ ծերուկ մը:

Գիշեր մը երբ անկողնին մէջ կը պառկէր՝ իր զաւակները քովն, գոչեց յանկարծ « Ես կը տեսնեմ լուսաւորը »: Զաւակները փսփսացին մէկ մէկու ահանջին. « Մեռնելու վրայ է »: Անիկա ըսաւ. « Այո՛, զաւակներս, իմ տարիքս վերարկուի մը նման վրայէս մէկդի կը ձգուի, և ես կ'երթամ դէպի լուսաւորին մանուկի մը պէս. ո՛վ Հայր, շնորհակալ եմ որ լուսաւորը միշտ բաց է ընդունելու զիս իմ սիրելիներուս քով որք կ'սպասեն ինծի »:

Եւ դեռ լուսաւորը կը փայլէր. փայլեցաւ նաեւ իր շիրիմին վրայ:

ԿԱՐԱՊԵՏ ԳՕՃԱՆԱՆ



ՎԱՐԺԱՅԵՍԸ


ՊԶՏԻԿՆԵՐՈՒՆ

Հասկցե՛ք յարգը ձեր վարժապետին,
Այն խոնել մարդուն որ ձեզ սայ համար,
ձգնի, աշխատի, իր ջանքը յետին
Կը թափէ զձեզ կրթելու համար,
Հասկցե՛ք յարգը ձեր վարժապետին:

Վարժապետնիդ ձեզ կը սիրէ տղա
Ու ձեզ չի պատժեր առանց պատճառի.
Նքէ չըլլա՛ք չար, կռիւ, աղաղակ,
Չի հանգէ երբեք. ըլլա՛ք միշտ բարի
Վարժապետնիդ ձեզ կը սիրէ տղա:

Յարգեցե՛ք զինքը, պատշոնն այն մարդուն՝
Որ լոյս կը սփռէ, կը կրթէ ձեր հոգին,
Մտքերնիդ պանել կը ջանայ արթուն,
Եւ որուն դուք ե՛ք պատճառը հոգին,
Յարգեցե՛ք զինքը, պատշոնն այն մարդուն:

ՓԱՐՓԱՌ



ՔՐԶԱԼԱՆԱԲ ՄԸ

Զարեհ՝ որ բաւական հարուստ անձի մը զաւակն էր, ամբողջ առաւօտ մը՝ տունէն դուրս ելաւ՝ իր թղթերն ու գրքերը ձեռքը բռնած՝ դպրոց երթալու:

Թէպէտ եւ դպրոցին մէջ կային իրեն հասակակից շատ տղաք, որոց հետ սիրով կը վարուէր վարժապետը, ամենեւին չէր ծեծեր զիրենք հին ժամանակի վարժապետներուն պէս, բայց եւ այնպէս՝ Զարեհ չէր ուղեր դպրոց երթալ: Ծամբան քայլ մը առաջ կ'երթար ու երկու քայլ ետ կը դառնար, իրեն այնպէս կուգար թէ՛ մեռնելու կ'երթար:

Այս տղան ուսմունք սորվելու փափաք չունէր, և ո՛չ ալ աշխատելու կամք. այնպէս որ շատ անգամ կը պատժուէր դասատուէն, եւ քանի՛ շատ յանդիմանութիւն լընէր իր ծնողքներէն ու դասատուէն, իր սրտին մէջ այնքան կ'աւելնար դպրոցի ու ուսման վրայ ունեցած ատելութիւնը:

Զարեհ դպրոց երթալու ժամանակ՝ համ-

բան երկարելու համար՝ դպրոցէն հեռու եղած փողոցներէն կ'երթար. եւ որովհետեւ ամրան գեղեցիկ առաւօտներէն մին էր այն օրն, եւ անուշ զեփիւռ մը կը փչէր, կամաց կամաց քալելով՝ կը մտածէր գլխուն եկած բաները, եւ կ'ըսէր ինքնիրեն, «Ո՛րքան դժբաղդ եմ ես և ի՞նչ ողորմելի կեանք է այս, ամէն օր գրէ՛, կարդայ, հաշիւ րէ՛, օրուան ամենագեղեցիկ ժամերը այս ձանձրացուցիչ ու անվերջանալի գործերով կ'անցնեմ»:

«Շատ տղաք կան՝ որ առանց սորվելու այս բաները՝ հանգիստ կ'ապրին, եւ ինչո՞ւ համար անոնց մէջ չպիտի գտնուիմ ես ալ: Ո՛հ, այո՛, ես ալ կ'ուզեմ անոնց պէս ըլլալ. գիր գրելն օգուտ մը չունի. կարդացածէս բան մը չեմ հասկնար եւ միտքս բան մը չեմ պահեր, ուստի չեմ ուզեր այլ եւս այսպիսի ձանձրացուցիչ բաներով զբաղիլ, քանի որ բան սորվելու կամք չունիմ ես, անօգուտ է ինձ սորվեցնելնին: Այլ եւս կարդալու փափաք չունիմ, գիրքերս ու թղթերս սա գետին մէջ պիտի նետեմ ու գլուխս առնեմ երթամ. վերջը ի՞նչ կ'ըլլայ թող ըլլայ:»

Այսպիսի մտածութեամբ դէպ ի գետը կը վազէր, ձեռքը վեր վերցուցած որ գրքերը հոն նետէ, նոյն միջոցին, իր ետեւէն խռու պոս ձայն մը լսեց որ կը պօռար. «Խե՛ռ տղայ, կեցի՛ր, կեցի՛ր, ի՛նչ կ'ընես»:

Զարեհ սաստիկ վախնալով ետ կը դառնայ տեսնելու համար թէ՛ արդեօք հայրը կամ դասատուն էր որ զինքը կը սաստէր. բայց ո՛չ, ուրիշ մէկը չտեսաւ հոն, այլ միայն ցնցոտիներ հագած ողորմելի քրջահաւաք մը, որ դէպ ի իրեն կը նայէր յանդիմանելու կերպով մը:

Զարեհ դարձաւ ու բարկութեամբ մ'ըսաւ անոր. «Ի՞նչ փնաս կ'ընեմ քեզի. գիրքերն ու թուղթերը իմն չե՞ն, կ'ուզեմ գետը կը նետեմ, կ'ուզեմ ծովը, քեզի ի՞նչ. ինձի վարժապետութի՞ւն ընել կ'ուզես»:

— Իրաւ որ ինձի փնաս չտար զանոնք նետելդ, պատասխանեց մարդը, բայց որովհետեւ իմ կրած ամէն դժբաղդութիւններս տգիտութենէս առաջ եկած է, անոր համար երբ տեսայ որ գիրքերդ գետը կը նետես՝ փոխանակ կարդալու եւ յարգանք պահելու, չի կրցայ համբերութիւնս զսպել որ չի

պօռամ. բայց կը տեսնեմ որ դժբաղդաբար դուն ալ իմ խելքէս ես, ըրէ՛, ուրեմն ուզածդ, սակայն օր մը այս ըրածիդ վրայ դուն ալ ինձ նման պիտի զղջաս, բայց զուր տեղ:» Քրջահաւաքն այս խօսքերն ըսելով՝ դարձաւ եւ սկսաւ աղբիւրուն մէջէն իր ճանկերովը աղաոտ քուրջերը հաւաքել:

Զարեհ, այս խօսքերուն վրայ սկսաւ քիչ մը մտածել եւ քրջահաւաքին կը նայէր, եւ վերջապէս հետաքրքրութենէ չարժած՝ կամաց կամաց անոր մօտեցաւ ու քաղաքավարութեամբ մը ըսաւ. «Բարեկամ, ըսէ՛ ինձ, կ'աղաչեմ, ինչո՞ւ համար կը զղջաս կարդալ չի սորվելուդ համար»:

— Պատժութիւնս շատ երկար է, պատասխանեց քրջահաւաքը կոպտութեամբ, եւ սկսաւ նորէն քուրջերն հաւաքել. բայց տղեկը, շատ ստիպեց որ պատմէ իր գլխէն անցածները: Վերջապէս մարդը գետինը դրաւ ձակն ու կողովը եւ նստաւ քարի մը վրայ ու սկսաւ պատմել:

Զարեհ ալ անոր քովը ոտքի վրայ կայնած մտիկ կ'ընէր:

«Հայրս երկաթագործ էր ու երեք զաւակ ունէր, որոնցմէ ամէնէն պզտիկը ես եմ. իմ եղբայրներս գրել, կարդալ ու թուաբանութիւն սորված էին մեր թաղին վարժապետէն. ինձի ալ նոյն դպրոցը զլիկեցին, բայց ամենեւին ուսմունքի, կարդալու սէր չունէի, մանաւանդ թուաբանութեան վրայ, երբ դժուարին խնդիր մը առաջարկեր դասատուն, ա՛յ ամէն բան մէկ կողմ կը թողուի, ու այս ընթացքով՝ երկու տարի դպրոց երթալ գալէս վերջը բան մ'ալ չի կրցայ սորվիլ, ու հագիւ հեղեքէն կ'մկմալով կրնայի կարդալ. հետեւաբար վարժապետս տեսնելով որ ինձի բան սորվեցնելը՝ անկանին մէջ ջուր ծեծելու կը նմանի եւ միւս տղոց սորվելուն ալ արգելք ու գէշ օրինակ կ'ըլլամ, վռնտեց զիս դպրոցէն»:

«Իմ ուզածս ալ այդ էր, բայց ծնողքս շատ ցաւեցան այս բանիս վրայ. իսկ ես ամենեւին ականջ չդրի ո՛չ մէկին եւ ո՛չ միւսին. թուք ու՛մուր կ'ընէին երեսիս ու հաստ գլուխ, տխմա՛ր կը կոչէին: Ամենեւին մտիկ չէի ընէր սուտ խուլ ըլլալով անոնց ամէնուն դէմ, միայն ուտելու, խմելու և զըլարձութեան ետեւէ էի: Մեծ եղբայրներս իրենց կարողութեան չափ կ'օգնէին հօրս՝

առևտուրի մէջ, ու ամէն շաբաթ անոնց քիչ մը դրամ կուտար, բայց ինձի բան մը չէր տար, վասն զի ամենեւին իր գործերուն օգուտ մը չունէի:

« Հետզհետէ տարիքս մեծցաւ, կատարեալ երիտասարդ մը եղայ՝ առանց մէկ փառա մը ունենալու: Քանի մը չար ընկերներու խորհրդով սկսայ տանը մէջէն հին ըզգեստներ գողնալ ու ծախել: Երբ անոնք սպառեցան՝ ծանրաբէր բաներ վերցնելու ձեռք զարկի: Բայց քիչ յետոյ եղելութիւնը իմացուեցաւ. առաջին անգամ սաստիկ յանդիմանուելով պատժուեցայ. ասոր վրայ քիչ մը ինքզինքս վար դրի, բայց վերջը նորէն յորդորուելով իմ ընկերներէս՝ սկսայ նոյն չար ճամբով դրամ ձեռք անցնել: Բայց օր մը՝ յանկարծակի քանի մը վայրկեանի մէջ առանց գիտնալու ինչ ըլլալս՝ ինքզինքս երկու ոստիկաններու մէջտեղ դտայ, որոնք ուղղակի բանտ առաջնորդեցին զիս:

« Ուրքա՛ն լացի, երբոր այսպիսի վիճակի մը մէջ հայրենի տունէն վռնտուեցայ. եւ որքա՛ն խիստ ու տաժանելի եկաւ այս կեանքը, ա՛լ չեմ կրնար քեզի պատմել: Երկու տարի բանտին մէջ մնացի, ու հետզհետէ վարքս ուղղեցի. հնազանդ, աշխատասէր ու պարկեշտ երիտասարդ մը եղայ, այնպէս որ պատիժիս պայմանաժամէն տարի մը առաջ զիս արձակեցին: Բանտին վերահացուն, որ մեծ զօրավար մըն էր խղճալով իմ վրայ, իր քովն առաւ զիս իբր սպասաւոր ու երբեմն երբեմն դրամ կուտար:

« Տէրս՝ առտու մը քանի մը նամակներ տուաւ ինձ, որոնց մին իր եղբորը տրուելու էր, եւ միւսը՝ թղթատարին: Նոյն միջոցին ուրիշ կարեւոր գործի մը պատճառաւ չի կրնալով շուտով կատարել անոր հրամանը, նամակները դարակի մը մէջ դրի. և յետոյ դառնալով առի զանոնք, Ընտրեցի այն նամակը՝ զոր եղբորը տրուելիքը կարծեցի, տարի իրեն ընակարանը, իսկ միւսը՝ թղթատարին յանձնեցի:

Եղբայրը տունը չէր, անոր համար այն միջոցին չիմացայ նամակը սխալ հասցէի յանձնելու: Սակայն իմ այս անմեղ ու պղծ տիկ պակասութիւնս այնքա՛ն խառնաշփոթութեան պատճառ եղաւ որ՝ տէրս սաստիկ յանդիմանեց զիս ու վռնտեց իր քովէն ըսելով՝ թէ « այս անբանին ձեռքէն քաշե-

լիքս չմնաց »: Վերջը իմ ընկերներէս մին իր քովն առաւ, որ քանի մը ամսունք մէջ աւելի բարձր աստիճաններու հասաւ, իսկ ես անգործ մնացի ու երկու ձեռքս գրպանս դրած՝ փողոցները կը չափէի, որովհետեւ ես ո՛չ մէկ գործ ընելու կարող էի:

Այս միջոցին մեծ դժբաղդութիւններ պատահեցան հօրս տունը. նախ մայրս մեռաւ, ու դու կրնաս զգալ թէ՛ որքա՛ն ցաւ պատճառեց զինքը կորսնցնելուս դժբաղդութիւնը, առանց անգամ մ'ալ իր երեսը տեսնելու ու օրհնութիւնը առնելու: Տարի մը վերջը՝ շարունակ տեղացած անձրեւներուն երեսէն հօրս տունը ու ջաղացքը, որոնք արդէն հին էին, փլան, ու խեղճ հայրս չինել տալու կարողութիւն չունենալով՝ պարտաւորեցաւ ծախել մնացած կահ կարասիներն ու թողուլ ձեռքի արհեստն ալ:

« Գրիգոր՝ իմ մեծ եղբայրս՝ ամուսնացաւ հարուստ ջաղացպանի մը աղջկան հետ ու իր աներոջը քով մնաց, որ հօրենական տուներնիս ու ջաղացքը վերստին շինեց: Իսկ Գէորգ փոքր եղբայրս ալ՝ երկրագործութեան արհեստին մէջ վարպետ ըլլալով՝ ստակ շահեցաւ, վերոյիշեալ գիւղին մէջ այգի մը ծախու առաւ, ու գիւղապետին փեսայ եղաւ, հայրս ալ իր քովն առաւ, բայց խեղճ մարդը՝ շատ չապրեցաւ, հազիւ վեց ամիս անցեր էր, ան ալ մեռաւ:

« Շատ տարիներ առանց գործի ու դրամի մնացի աշխարհի մէջ, վերջապէս մշտածեցի որ եղբորս քով երթամ, ուստի ուղղակի եղբայրներուս քով գացի: Նախ մեծ եղբայրս գտայ, ու երբ զիրար տեսանք, գրկեց զիս մեծ սիրով ու երկուքս ալ լացինք մեր ծնողաց մահուան վրայ: Յետոյ տարաւ զիս իր կնոջ ներկայացուց, որ մեծ պատուով ընդունեց, և ճաշի ալ հրաւիրեց:

« Այն օրը եղբորս հետ առանձին խօսելով՝ խնդրեցի որ զիս իր քովն առնէ. բայց եղբայրս իմացուց թէ՛ առանց իր աներոջը հրամանին չի կրնար առնել, որովհետեւ ամէն բան անոր հրամանովը կը կատարուի, և խոստացաւ որ զիս անոր ներկայացնէ: Շուտ մը զիս տարաւ Բարթոմ աղային քով որ ծանր գիւղի մարդ մ'էր, ոտքէս մինչեւ գլուխս աղէկ մը չափելէն յետոյ, ըսաւ ինձի.

« Թէ որ լաւ հաշիւ ընել գիտես, կըր-



նաս օգնել մեզի խանութին մէջ, ուր տեղ միշտ գործ պակաս չէ»։ Այս խօսքին վերայ արիւնս պաղեցաւ, և որովհետեւ պատասխան կ'սպասէր ինձմէ, ինքզինքս պզգտիկ չի ձգելու համար եղբօրս քով՝ ըսի թէ հաշուակալութեան մէջ այնքան յաջողակ չեմ։ Կրկնեց այն ատեն. «Ուրեմն ջաղացքը կեցիր, որ հոն եկած ցորենի պարկերն ու գացած ալիւրները նշանակես»։

«Մտածէ անգամ մը թէ՛ որքա՞ն խըպնեցայ երբ հարկ եղաւ ճամարիտը խօսիլ անոր թէ՛ ո՛չ կարգաւ գիտեմ և ո՛չ գրել։

Գիտե՞ս ի՞նչ ըսաւ այն ատեն Բարթամ անդան. «Քեզի պէս էջ մը ինծի պէտք չէ՛, վասն զի քեզմէ աւելի խելացի էջ մը ունիմ, որ ջաղացքը կը դարձնէ» ու այսպէս ըսելով կրնակը դարձուց ու գնաց։

«Իմ ու նմանապէս եղբօրս սիրտը շատ կոտորեցաւ։ Հետեւեալ առաւօտ ամօթէս առանց մնաս բարով ըսելու ձգեցի եղբօրս տունը՝ միտքս դնելով միւս եղբօրս քով երթալ։

(Շարունակելի)





Խորապատի ապարանք

Փ Ո Ւ Ր Ո Ւ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԿԻՋԲԷՆ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐ

Հ Ի Ն Պ Ա Տ Մ Ո Ւ Ք Ի Ն

(Շար. 9րդ թիւն)

Գ Լ Ո Ւ Խ Ե

ԱՍՈՐԵՍԱՆՑԻՔ ԵՒ ՓԻՒՆԻԿԵՑԻՔ

Կառավարութիւն, կրօնք եւ արուեստք Ասորեսացիք. — Ասորեստան՝ Հնդկաստանի նման չունէր Բաղդեր, այսինքն առանձնաշնորհեալ մարդերու տստիճանաւորեալ կարգեր, և եթէ նինուէի կամ Բաբելոնի թա-

գաւորը իր հպատակներու կենաց ու ինչքին բացարձակ տէրն էր, գէթ ինքզինքն աստուածներու կարգը չէր դասեր, նեղասի հովտին տիրապետող փարաւոններուն կամ Հիւքսոսներու նման: Ասորեստանի կամ Բաբելոնի ժողովուրդներու մէջ կ'ընդնշմարուէին միակ Աստուծոյ մը գաղափարը. թէ և քողածածուկ եղած լինի ան բազմութեամբն այն խել մը երկրորդական աստուածներու, որոնք բնութեան ուժերու մարդեղացուններն և անձնաւորումներն էին: Քաղաքաստանի վճիտ ու պայծառ երկնքին տակ տիրող կրօնքն եղաւ Սաբէականութիւնը կամ լուսաւորներու վարդապետութիւնը. իրենց մեծ աստուածը եղաւ արեգակին անունով պաշտուած Բահազը կամ լԲԷԼը (հայերէն՝

փայլը)• եւ իրենց երկրպագեալ երկնային մարմնոց մէջ դառաւորեցին այնպիսի ոգիներ, որք իբր թէ մարդուն է, ըստ աւանդութեանց, անոր նախասահմանեալ ճակատադրին վրայ զօրեղապէս ներգործող բացառիկ ազդեցութիւն մը ունենան: Իրենց քուրմերը իբրեւ աստղաբաշխ համալուար էին հնութեան մէջ: Անոնց կը պարտինք Զողիակոսի. 12 կենդանակերպերու շրջանակին 360 աստիճաններու եւ ամէն մէկ աստիճանին 60 մանրորդներու բաժնուածները, լուսնոյ խաւարմանց աստեղագիտական հաշիւը, Պիւթագորեսն կոչուած թուագիտական աղբւսակը, եւ ծանրութեանց, կշիռներու, չափերու ու դրամներու դրութիւն մը, որ Հին աշխարհին ամբողջ շահագործական տուրեւառիկին ծառայեց, բայց անոնց այս ամէն գիտական, արուեստական առաւելութեանց հետ անոնց կը պարտինք նաեւ մարդկային յիմարամտութեանց կարգը դասելիք աստղաբաշխական նախապաշարումները, որոց մի մեծ նմոյշն է մեր մէջ աւանդական վեցհազարեակիւ եւայլն:

Ժողովուրդն ունէր ձուկ աստուածներ, թռչուն աստուածներ: Միլիդէա դիցուհւոյն անուամբ կատարուած քրմական պաշտամունքը ծայր աստիճան ամօթալի գեղծումներու տեղի տուող դիցակրօն դրութիւն մըն էր: Ճարտարարուեստը ծաղկած, զարգացած էր: Բաբելոնի գորգերը, անոր հիւսուածոյ գործուածները, իր արծնեալ անօթաշինութիւնը կամ բրուտագործութիւնը անոր գոհարագործութեան վերաբերող թանկագին առարկաները ամէնուրեք կը փռնուէին: Վերջապէս ասորական քանդակագործութիւնն ու արձանագործութիւնն վերհանեցին արուեստ մը, որուն վրայ ո՛չ ոք այլ եւս չի սարակուսիր, եւ ասորական այս արուեստագիտական տաղանդն ու հանձարն էին որք հին Յունաստանի հրաշագործ գեղարուեստին նախաշաւիղ առաջնորդն եղան: Նոյնպէս ճարտարապետական արուեստն այն ատեններ վերջին աստիճան կատարելագործած էին, որոց վկայներն էին Բաբելոնի, Նինուէի ու Խորսապատի մէջ կառուցած պալատներն ու շէնքերը:

ՓԻԻՆԻԿԵՑԻՔ

Եփրատայ եւ Միջագետի մէջ կը տարածուին Սեմական ցեղին դուարածական ու վաշկատուն թափառաշրջիկներու (այսօրուան Պէտէվիներու) անապատը եւ Լիւանանը, որուն արգասաքեր հովիտներուն մէջ բնակութիւն հաստատեցին Պարսկական ծովախորշին եզերքներէն եկող Գանանացի ցեղերը: Այս ցեղերէն մին՝ Փիւնիկեցւոց ցեղը, իրեն բնակութեան բաժին առաւ Յորդանանու եւ Լիւանանու լեռանց յայնկոյս ծովակողմանքը: Յետուի աշխարհակալութեանց շնորհիւ Յորդանանու Հովիտն երբայեցւոց իշխանական կալուածն եղաւ: Փիւնիկեցիներն յայնժամ նաւերու շինութեան կարեւոր փայտերը հայթայթող Լիւանանին եւ բազմաթիւ նաւահանգիստներ ունեցող ծովուն մէջտեղ սեղմուած ճարտար նաւավարներ ու նաւաստիներ եղան եւ հարստացան վաճառականական շահագործութեամբ:

Սիւզոն, Տիւրոս, Պիպղոս իրենց գլխաւոր քաղաքներն էին: Ս. Գիւրքը մեզ կը պատմէ արդէն ո՛րպիսի գեղիս ու շուայտ շուայլութիւն, ո՛րպիսի ցով ու մուլի սովորոյթք, կենցաղ, ո՛րպիսի պիղծ ու արիւնառու իրօնք կը տիրէին Փիւնիկէի մէջ: Իրենց մեծ շաստուածը որ Բահալ—Մողոքն էր կ'ուզէր որ մայրերն իրենց ձեռօք իրենց զաւակները ողջ ողջ ողջակիզեն իպատիւ իրեն, եւ Աստարտէ իրենց ծանօթ դիցուհին ամէն խառնակեցութիւն օրինաւոր կը համարէր:

Փիւնիկեցիք Յոյներէն շատ ժամանակ առաջ հաստատուեցան Էգեան ծովուն կղզեաց մէջ եւ հիմնեցին գաղթականութիւններ Սիկիլիոյ մէջ, Կեղտաց (հին Գաղիոյ) երկրին մէջ, ուր իրենց բնակութեան հետքերն շատ կանուխ աներեւութացան: Սպանիաի հարաւային կողմը որ արծաթի ճոխ հանքեր ունէր. վերջապէս Ափրիկէի մէջ, ուր կարթագինէն որ հնութեան ամէնէն աւելի ծովային մեծ ու հզօր տէրութիւնն եղաւ, իրենց նաւատորմիդները կարմիր ծաւէն կ'երթային փնտռել Հարաւային Ափրիկէի փղատամն ու ոսկեփոշին: Արարիայի խունկերն ու բուրաւէտ բովիճայքը, Պարսկական ծովածոցին մարգարիտները եւ Հընդ-

կաստանի մէջ հազարաւոր թանկագին նպարեղէններ: Իրենց կարաւանները կ'երթային Բաբելաստան, Պարսկաստան, Բակտրիա (Մարաստան) եւ Թիպէդ, և այն կողմերէն կը բերէին Սերեկաի (Չինաստան) մետաքսը, Թաթարիստանի մուշտակները, և Հընդ-կաստանի թանկագին ակունքները: Իրենք ալ իրենց ճարտարագործութեան արտադրութիւնները՝ ապակին, ծիրանին (pourpre) և դարդարանքի, պաճուճանքի վերաբերեալ ուրիշ շատ մը արհեստական առարկաները կը խառնէին ծովու թէ ցամաքի վըրայ ունեցած այս ընդարձակածաւալ առևտուրին ու վաճառականութեան հետ:

Փիւնիկէի այս բարգաւաճ վիճակը աշխարհակալներուն ընչաքաղցութիւնն իրենց դէմ գրգռեց: ԺԼրդ իշխանապետութեան Փարաոններն աշխարհակալեցին Փիւնիկէն. Ասորեստանցի Սինեքրիմը Տիրոս քաղաքը կործանեց (579) և Աղէքսանդր ալ հիմնադրեց քանդեց, Բայց Փիւնիկէ իր քաղաքակրթական գործը գլուխ հանած էր, առած էր, Արևմուտք բերելու համար, ինչ որ Եգիպտոս և Ասորեստան ունէին արհեստի ճարտարագործութեան և գիտութեան մէջ լաւագոյն և ընտիր բաներ. գլխաւորապէս Բաբելոնի մէջ չափերու ու կշիռներու դրութիւնը, որ իր ընդարձակ առևտուրին համար կարեւոր գործակատար մ'էր և Մէմփիսի մէջ այն այրեցողմանակալ գրութեամբ գրելու կերպը որ քաղաքակրթութեան գործիքն եղաւ:

(Շարունակելի)

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՅԵՂԵՐ

ՃԱԲՈՆԵԱՆ ՑԵՂ

(Շարունակութիւն 10րդ քիւէն)

«Այս պարագաները չարգիլեցին Միքստոն՝ տեսակցութեան օրն որոշելու, ինչոյ հանելով իր մեծաշուք այցելուին առջև կայսրութեան մեծ թափօրը: Իր աղեղնաւորաց եւ բոլոր քրմապետական ուղեւորաց ընկերակցութեամբ, պալատէն դուրս ելաւ հարաւային կողմի այն դուռէն, որ, ին-

ներորդ դարու վերջերը, հռչակաւոր պատկերահան եւ բանաստեղծ Քոլէ Բանօքաի պատմական նշանադրոջմներով զարդարուեցաւ: Միքստոն եւտօկապի մէջ գտնուած արուարձանները գնաց, և դէպ ի դեպ կը ելաւ բոլոր գլխաւոր փողոցները պտտելով:

«Միքստոն՝ թափօրին պաշտէն, իւր իշխանական հին պատուանշանները տանիլ կուտար, որոնք էին, իր հանին Սլանամիի հայելին, այն շնորհագեղ դիցուհւոյն որ Արեւ չաստուածը ծնաւ Սվատսիի կղզւոյն մէջ: Երկրորդ՝ այն մեծափառ դինանշաններ, որոց երկար թուղթէ դրօշները Չինմու աշխարհակալին բանակաց վրայ ձածանած էին: Երրորդ, եւամթօի դիւցազնին շողշողուն սուրը: որ յաղթած էր այն ութը գլուխ ունեցող Հիւրային, որոյ համար ազնուական ցեղէ կոյսեր կը զոհէին: Չորրորդ, կայսրութեան օրինաց վրայ դրուած կնիքը: Հինգերորդ, այն եղեւնափայտէ հովահարը, որ նեղ եւ նուրբ տախտակի մը ձեւը ունենալով, արքունի գաւազանի տեղ կը ծառայէր եւ 2000 տարիներէ ի վեր մեռնող Միքստոն իր յաջորդին կ'անցնէր:

«Չափի մոռնամ խօսիլ այնպիսի բանի մը վրայ նաեւ, որ նախորդ պատմածներս պիտի ամբողջացնէ, այս է կայսրութեան բոլոր գինուորական դրօշները, որ հանդիսաւոր օրերու եւ այցելութեանց միջոցին կը պարզէին, սոյն թափօրին մէջ ալ պարզուած էին:

«Թափօրին ամէնէն բազմաթիւ և ամէնէն նկարչական խումբերն էին բոլոր ազանդներուն ներկայացուցիչներն, Քամիւններու հին կրօնքին պատուակալներն, իրենց հագուստով, հագիւ պալատական մեծ պաշտօնակալներէն կը տարբերէին: Առիթ ունեցայ արդէն նկարագրելու թէ՛ Ճաբօնցիք ի սկզբան, առանց քրմութեան կրօնք մը ունէին: Պուտտայականութիւնը, ընդհակառակն, որ Չինաստանէն եկած եւ արագապէս տարածուած է բոլոր կայսրութեան մէջ զանազան տեսակ աղանդներ, ծէսեր և հոգեւոր միաբանութիւններ կը ներկայացնէր: Այս կրօնքին յատուկ եղող քուրմերն, վանականներն յիշեալ ուղեկցութեան մէջ՝ մեծարոյ անձանց անվերջանալի շարք մը կը ձեւացընէին եւ որոց գլուխները անմազ կամ ամբողջապէս գերծուած, երբեմն մերկ էին

երբեմն այլանդակ գլխաքղներով, խոյրերով եւ լայն ժապաւէններ ունեցող գլխանոցներով ծածկուած էին: Ոմանք իրենց աջ ձեռքը գաւազան մը, ոմանք համրիչ մը, ոմանք ճանձկան մը, գոգաւոր խեցի մը, թուղթէ երիզներով ջուր սրակելու գոլծիք մը բռնած էին: Անոնց հագուստներն էին, պարեգօտներ թեղանաւոր շապիկներ, ամեն կերպ եւ ամեն դոյն վերարկուներ: Անոնց ետեւէն կուգային Միքատօի մարդի-

ոտքերը կ'աներեւութանային անդրաժարտիքներու լայնութեանը տակ: Մեծ կոր սուր մը: աղեղ մը, նետերով ծածկուած կապարճ մը, բոլոր իրենց գէնքերը կը կապմէին: Անոնց մէջէն ոմանք ձի հեծած, մեծ տաքսէ մեծ գնտակներ ունեցող լարով մը կապուած, նուրբ գաւազան մը կը գործածէին: Անոնց ետեւէն կուգար Միքատօյին արքունական ծանր կառքերը, որք թանկագին փայտերով շինուած եւ զանազան



Ճարօցցի ֆուրմ

կը: Իրենց արարողական հագուստի մասին քրմապետական խումբը ամէն բանէ աւելի վայելչութիւնը կը փնտռէր: Փոքրիկ գտակ մը կը դնէին, որու երկու կողմի ծայրերուն վրայ բաց հովահարի ձեւ ունեցող վարդաբան մը դրուած էր եւ ամբողջ կարանին վրայ պսակներով զարդարուած, մետաքսեայ չքեղ բաճկոնակներ կը հագնէին: Իրենց

գոյներով նկարուած էին, իւրաքանչիւրն երկու սեւ գոմէշներով լծուած էին եւ ճերմակ թիկնոցներ հագնող մանկլաւիկներ զանոնք կ'առաջնորդէին: Անոնց մէջ կը գլտնուէին, կառքի վանդակապատ գուռերու ետեւը նստած, կայսրուհին եւ իր աղախիները: Անոնց ետեւէն կուգային կայսրուհին յիսուն շքադիր տիկիները, որոնք ծած-

կուած գահաւորակներու մէջ նստած էին :

« Գալով բուն իսկ Միքատօին , միշտ իր քրմայետական տեսակ մը գահաւորակովը , դղեակէն դուրս կ'ելլայ : Այս գահաւորակը որ երկար քեղիներու վրայ հաստատուած է և զոր յիսուն սպիտակահանդերձ անձինք կը կրեն , հեռուէն խուռն բազմութեան վրայ կը նայէր և շինուած էր այնպիսի սուրբնակալ տուփերու ձեւով , որոնց մէջ Քամիաներու սուրբ մասունքը կը դնեն : Կրնաք զայն բաղդատել լայնահիմն գմբէթ ունեցող և փոքրիկ զանգակներու յաւելուածով զարդարուած պարտէզի յատուկ եղող վրանի մը : Գմբէթին վրայ դրուած է գունտ մը և այդ գունտին վրայ՝ իր բիտերուն վրայ կանգնած , թեւաբաց և ուռած , տտունով տեսակ մը աքաղաղ : Չինաստանի և Ճապոնի մէջ 300 անուանեալ դիցարանական թռչունին նմանութիւնն է այն :

(Շարունակելի)

Ա . Մ .



Դ Ի Տ Ա Կ Ա Ն Վ Է Պ

Ժ Ի Ի Ա Վ Է Ր Ն

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵՌՈՆԸ

(Շարունակութիւն 10-րդ քիւհն)

ԺԲ.

Վերջապէս մեկնելու օրը հասաւ : Առտուն կանուխ չորս ձիերու խփնջիւնը արթնցուց զիս . շտապով հագուեցայ ու փողոց իջայ : Հանս բռնները ձիերուն վրայ կը կապէր անսգիւտ ճարպիկութեամբ մը , իսկ հօրեղբայրս քովն ի վեր , բրած գործէն աւելի ազմուկ կը հանէր : Ժամը 12ին ամէն բան պատրաստ էր . հրաժեշտ առինք մեր ազնիւ հիւրընկալէն և ճամբայ ինկանք :

Օդը ամպամած էր . ո՛չ նեղացուցիչ տաք կար ո՛չ ալ անձրեւ կուգար , ճշմարիտ զօսաչըջիկի օդ մը կ'ըլէր : Հանս առջեւէն կը քալէր . ետեւէն կուգային երկու ձիերը՝ որոնք բռնները կը տանէին , վերջապահը կը

կազմէինք հօրեղբայրս ու ես միւս երկու ձիերուն վրայ : Գանգատելու տեղ մը չունէինք մեր հեծանելիներէն , որոնք թէեւ փոքր բայց արագընթաց էին եւ խիստ տոկուն կ'երեւէին : Հօրեղբայրս սկսաւ անոնց գովեստը կարգալ ինծի , իսկ ես մտքէս կը խնդայի իրեն վրայ որ միշտ կը ջանար երկար սրունքները վեր բռնել գետինը չքրտուելու համար : Ճամբան քանի մը գիւղեր կանգ առինք քիչ մը հանգստանալու համար : Գիշեր եղեր էր երբ Կարտէր գիւղը հասանք :

ԺԳ.

Թէեւ գիշերը վրայ հասեր էր , բայց բռնաւ մութ չէր : Իսլանտայի գտնուած լայնութեան աստիճանին տակ արեւը մարը չի մանէր յունիս և յուլիս ամիսներուն մէջ , բայց ցուրտը սաստիկ էր , մսիլ սկսայ :

Գիշերը անցնելու համար պզտիկ խրճիթ մը մտանք : Տանտէրը , ձեռքը մեզի երկնցուց և առանց արարողութեան ներս հրաւիրեց : Ընդամէնը չորս սենեակ ունէր այս տունը . խոհանոցը , գործատեղին , ընտանիքին ննջարտնը և հիւրերու յատուկ սենեակը : Ցեղունը շինողները բնաւ հօրեղբորս վրայ չէին մտածած , անանկ որ խեղճը քանի մը անգամ գլուխը դուրս ցցուած գերաններուն վարկաւ :

Մեզի յատկացուած սենեակը բաւական ընդարձակ սրահ մըն էր , յատակը ծեծուած հողով ծածկուած և միակ պատուհանով մը լուսաւորուած , որու ապակիին տեղ կը բռնէր ոչխարի ձգտած մորթ մը : Անկողինները կը բաղկանային կարմիր ներկուած փայտէ տեղերու մէջ ձգուած չոր խոտէ : Ասիկէ աւելին չէի փնտռէր . միւսակ նեղացուցիչ բանը չոր ձուկի հոտ մըն էր , որ բոլոր տունը կը բռնէր :

Ճաշէն առաջ տան տէրն ու տիրուհին « Երջանիկ եղիւ » բանաձեւով բարի գալուստ մաղթեցին մեզի . այտերնուս վրայ մէյմէկ համրոյր դնելով : Չմոռնամ ըսել թէ իսլանտուհին տասներկու զաւակ ունէր , որոց ամէնն ալ տանտիրոջ օրինակին հետեւեցան : Այս արարողութենէն վերջը սեղան նստանք . ամէնը քսանըջորս հոգի էինք , մին միւսին վրայ սեղմուած : Ճաշը կը բաղկանար ապուրէ մը , չորցած ձուկէ , տեսակ

մը մածունի պէս բանէ և ջրախառն կաթէ։ Այնչափ անօթի էի որ առջիս դրուածը լափեցի անյազօրէն։ Վերջապէս պառկելու ժամանակը եկաւ ու ես ալ անկողին ինկայ։ չեմ գիտեր ինչպէս շուտ մը առտու եղաւ, երբ արթնցայ բաւական ուշ էր։

Վերջին միասրարով մը ըսինք հիւրասէր Իսլանտացիին և շատ դժուարաւ պզտիկ դումար մը ընդունել տալէ ետքը ճամբայ ելանք։ Հետեւեալ երեք չորս օրերը նշանակելի դէպք մը չպատահեցաւ։

ԺԴ.

Յունիս 21-ի իրիկունը Սթարի հասանք։ Այս գիւղը՝ պազալթի պատերով բռնուած ժայռ մըն է։

Գիտենք թէ պազալթը՝ հրային ծագում ունեցող ժայռ մըն է։ Այս ժայռերը խիստ կանոնաւոր կերպով մը շարուած են իրարու վրայ, կարծես թէ բնութիւնը զանոնք կառուցանելու համար կարկին, քանակ ու կապարալար գործածած է, և յիշաւի ստեղծած է անանկ գործ մը, որու չեն կրնար հաւասարիլ հին Բաբելոնի և Հելլենաստանի շքեղ պերճութիւնները։

Իմացած էի որ Իրլանտայի մէջ «Հսկաներու ճամբայ» մը կար և Հէթրիդեաններու մէջ ալ Ֆինկալի քարայրը, բայց պազալթի կառուցուածք մը բնաւ չէի տեսած։ Արդ, այդ տեսարանը Սթարիի մէջ աչքիս առջեւ կը պարզուէր։

Մոցին ամբողջ եղերքը, ինչպէս ամբողջ դերակղզիինը, կազմուած էր կարգ կարգ ուղղահայեաց սիւներէ՝ երեսուն ոտք բարձրութեամբ։ Ասոնք իրենց վրայ կը բռնէին հորիզոնական դիրքով դրուած սիւներէ ցեղուն մը, որու ամբողջութիւնը կէս կամար մը կը ձեւացնէր ծովուն վրայ։ Տեղ տեղ բնական աղբեցութեան տակ ձեղքեր բացուած էին և որոց մէջէն ծովուն փրփրոտ ալիքները ներս կը խուժէին։ Քանի մը պազալթի կտորներ, որոնք ալիքներու սաստկութենէն փրթած էին՝ հողին վրայ կ'երկըննային, նման հին տաճարի մը մնացորդներուն։ Ահա՛ այս էր վերջին գիտած կէտս երկրի երեսը։ Հանս դիտմամբ մեզի հոս բերած էր։

Գիշերը գիւղերէցին տունը անցուցինք, որ աւելի ձկնորս ու պալատաւ էր, արհեստով ու բնաւորութեամբ, քան թէ Աստու-

ծոյ բանին քարոզիչը։ Երեւակայեցէք, իր վերջին երթաք բարովը, չափազանց գինեղով ցուցակ մը եղաւ, իւր թէ իր տունը պանդոկ մը եղած ըլլար։ Հօրեղբայրս առանց դիտողութեան վճարեց ու մեկնեցանք։


Հանս երեք բեռնակիր վարձեր էր, մեր կարասիները փոխադրելու համար։ Հօրեղբայրս իմացուցած էր իրեն թէ կարելի եղածին չափ խառնարանին մէջը պիտի իջնենք։ Հաւատարիմ առաջնորդը մինակ գլուխը դէպի առաջ ծռած էր ի նշան հաւանութեան. ուր որ ալ երթայինք իրեն համար միեւնոյն բանն էր։

Այս դիտողութեան վրայ ուշաբերեցայ։ Մինչեւ հիմա ճամբորդութեան այլազանութիւնները, տեսած նոր երկիրներս՝ մտքէս վանած էին զիս տազնապող գաղափարները, բայց հիմա նորէն խորհիլ սկսայ թէ բուն ճամբորդութեան նպատակը ինչ էր։ Ա՛լ բան մը չէի կրնար ընել հիմա, ետ կենալու ժամանակը անցեր էր։ Հօրեղբորս հետ երթալը՝ Համպուրկ եղած ժամանակնիս կըրնայի մերժել, բայց հիմա որ Սնէֆէլսի ըստորոտը հասանք, այդ բանը անկարելի էր։ Միւս կողմէ միտքս գէշ բաներ կ'իյնային։ «Տեսնենք, կ'ըսէի ինքնիրենս. Սնէֆէլսի դագաթը պիտի ելլենք, լա՛ւ. խառնարանը պիտի իջնենք, աղէ՛կ. Ուրիշ շատ մարդիկ մինչեւ այդքանը ըրած և բան մ'ալ չեն եղած։ Բայց մենք հոգ կանգ չպիտի առնենք. մինչեւ երկրիս փորոտիքը պիտի թափանցենք, ներքին Լաբլորինդոսներու մէջ պիտի կորսուինք՝ եթէ Սաքնիւսէմ իրաւ ըսած էր։ Արդ, ո՞վ կրնայ ապացուցանել թէ Սնէֆէլս յաւիտեան մարած մնալու դատապարտուած է. ո՞վ կ'ըսէ թէ նոր բորբոքում մը չպատրաստուիր։ 1229էն ի վեր ճիւղը կը քնանայ. չկրնա՞ր ըլլալ որ մէկէն ի մէկ արթննայ։ Եթէ արթննայ, մենք ի՞նչ պիտի ըլլանք»։

Այնչափ կը խորհէի այս հարցումին վրայ որ ամէն քնանալուս բորբոքում մը կ'երազէի։ Շիտակը՝ հրաբուխներէ դուրս նետուած ժայռերու դէր կատարելը հաճելի բան չէր։ Վերջապէս չգիմացայ. գացի հօրեղբորս յայտնելու զիս տանջող գաղափարը։ Բոլոր վախու կէտերս սլարվեցի իրեն, և սպասեցի որ ուզածին պէս բարկանայ։

Թարգմ.

ԶԱՐԵՆ. ՊԵՊԵՐՆԱՆ



ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

ԲՈՒՈՒԱՍԾ ԳՆՏԱԿԸ

Պաղատողները երկու խումբեր կը կազմեն:

Երբ նշանը տրուի, առաջին խումբին տղայք յաջորդաբար օդին մէջ կը նետեն գնտակ մը: Հակառակ կողմէն երկրորդ խումբին տղայք եւս կը նետեն, եւ եթէ հակառակ գնտակներն իրարու հանդիպին և զիրար չօշափեն օդին մէջ, յաղթութեան նշան է: Ամէն գնտակ որուն ուրիշ մը դպած է, կ'արժէ 10) նիշ:

Յետոյ երկրորդ խումբէն կ'սկսին գընտակներն նետել որոնց կը պատասխանեն առաջնոյն նման թշնամի տղայք: Որ կողմէ եթէ յաջողին ստանալ 300-500 նիշ, այդ կողմը յաղթող կը հանդիսանայ:

Տղայ մը մասնաւոր թուղթի մը վրայ կը նշանակէ նիշերն:

ԳԱՌԱԿՈՒՍԻՆ

Մոյն խաղին մէջ կրնան մեծ թուով տղաք գտնուիլ: Պաղատողները կը բաժնուին երկու խումբերու քառակուսաձեւ դիրքի մը մէջ շարուած, եւ արդէն խաղին անունն եւս կը յայտնէ զայդ:

Նշանակոյ տղեկը քառակուսիէն դուրս կը մնայ. քառակուսիին մէջ կը նետէ գընտակը յայտնելով բարձրաձայն ո՞ր խումբին մէջ նետելը: Իսկոյն նշանակեալ խումբին երկու կարգերը որք իրարու դէմ կը գտնուին, կը մեկնին, զիրար խաչաձեւ կտրելով կ'անցնին միեւնոյն ժամանակ գնտակին կը զարնեն եւ մեծ ուշադրութիւն կ'ընեն հե-

տեւեալ կանոններուն, որք այնքան անհմարա՞նչա են խաղին յաջողութեանը համար:

Ա. Թոյլ չտալ որ գնտակը դպչի գետինը տեղ փոխելէ առաջ:

Բ. Ձանալ որ գնտակը քառակուսիէն դուրս չելլէ:

Եթէ խաղը այդ պայմաններուն համեմատ եղած է, 100 նիշ կը շահի խաղին մասնակցող խումբը: Եթէ չէ կատարուած, 50 նիշ կը կորսնցնէ: Եթէ գնտակը քառակուսիէն դուրս ելլայ, դարձեալ 50 նիշի կորուստ կայ: Ամբողջ խաղը շահելու համար, 500 նիշ պէտք է ընդունիլ:

ԱՐՈՒԵՍՏԱԴԻՏԱԿԱՆ

Իմ ընկերներուս

ՈՍՏՂ (էօֆէ)

Երբ դարունը գայ և ծաղիկները ծաղկին թռչունները նոր ծառաստաններ կը վերադառնան իրենց անցեալ տարուան մեկնած երկիրներէն, այն ժամանակ ընկերակցացս գլխաւոր և բնական փափաքն է որսալ զանոնք, ինչպէս ես իմ մանկական տարիքներուս մէջ: Որսալու դործին է թռչնոց կափուէն (գափանձա) ետք ոստղը՝ այսինքն (էօքսէ) ուստի տղայք ոստղեր ունենալու համար խոնեւա՞մ կը դիմեն թաղին մանրավաճառներուն, որոնք խալիւջա ոստղեր տալով անոնց, կը գրպանեն դրամները՝ զանազան խաբէական մածուցիկներով, որք ոչ նպատակին կը ծառայեն և ոչ ալ ո և է զբօսանքի մը: Ես ալ քանիցս միեւնոյն դժբաղդութիւններուն հանդիպած եմ և ատոնց միակ դարման գտած եմ ես ինքս անձամբ ոստղ պատրաստելով: Տեսէ՛ք թէ ինչպէս կը պատրաստեմ: Կ'առնեմ էսկ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը հրատարակուի ամեն ամսոյ 1ին, 10ին եւ 20ին			
Կ. ՊՈՂՍՈՅ ՀԱՄԱՐ		ՀԱՍՑԷ	ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
Տարեկանը	40 դահեկան	ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Տարեկանը 45 դահեկան
Վեցամսեան	20 »		Վեցամսեան 25 »
Եռամսեան	10 »	Կ. ՊՈԼԻՍ	Եռամսեան 12 1/2 »
ՌՈՒՍԻՈՅ ՀԱՄԱՐ		ՀԱՍՑԷ	ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
Տարեկանը	4 ըուպի	ԹԻՒ 61	Տարեկանը 10 ձրանք

Ձեռնիկ կը ծախուի հոտը 40 փարայ

օխայի չափ կտաւատի իւղ (պէզիր եաղը) և կը դնեմ թափցու ամանի մը մէջ ու կրակին վրայ դնելով լաւ մը կ'եփեմ զայն մենչեւ որ նա կ'սկսէ նիւթ մը կը դառնայ 1—2 ժամուան մէջ: Ապա կ'առնեմ վար զայն և պաղելէն վերջ չոր ոստղերս նոյն մածուցիկ նիւթին մէջ կը թաթխեմ, որով պատրաստ կ'ունենամ անխարդախ 100ի չափ ոստղեր: Ահա՛ դիւրին և ածան գործողութիւն մը որ կրնայ յազեցնել իմ ընկերակիցներուս փափաքը:

Գում գալու

ԺԻՐԱՅՐ Յ. ԱՐԻԿԵԱՆ

Ուսանող Պեգճեան մայր վարժարանի



ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Գրիգոր Էֆ. Տէլի Ղազարեան մէկ տա-
րեկան «Հանրագիտակ» կը նուիրէ Սվազի
Ազգ. Որբանոցին: Ի դիմաց աշակերտաց
չնորհակալութիւն կը յայտնենք սոյն նը-
ուէրին:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Մարզուան. Կ. Էֆ. Գ. — 1-2 թիւ Հանրագի-
տակ Ա. Էֆ. Գիւլպէնկեանի թով կայ: — Ձեր ըսած
տեղիւրը ծանօթ չունինք:

Աֆիոն Գարահիսար. — Ա. Էֆ. Պ. — Ձատ նա-
մակ գրուեցաւ ձեզ 15 օր առաջ: — Պակաս թիւերը
ղրկուեցաւ: Ստացանք շնորհակալ ենք: Այցաքար-
դերն զրկուեցաւ: Գ. Մ. ի յօդուածը պիտի հրատա-
րակուի:

Նիկովիդիա. — Յ. Էֆ. Տ. Ա. — Դեռ չաւարտե-
ցաւ: — Նոր բաժանորդներուն զրկուեցաւ 1-10 թի-
ւերը:

Ատանա. — Յ. Էֆ. Դ. Պ. — Ստացանք, շնորհա-

կալութիւն: — Բաժանորդաց ցանկը ուղղուեցաւ:

Վ. Մանիսա. — Գ. Էֆ. Մ. — Ձեր խնդրած զիր-
քը յանձնուեցաւ թղթատարին: — Ձատ նամակ կ'ըն-
դունիք:

Մարզուան. — Ա. Էֆ. Կ. — Ստացանք բաժա-
նորդաց ցանկն: — Ձեր խնդրածները պիտի զրկուին
11 թիւ հանրագիտակի հետ: — Հաւգա նոր բաժա-
նորդին զրկուեցաւ 1-11:

Մարզուան. — Յ. Էֆ. Թ. Տ. — Ձեր փափաքա-
քանաց համեմատ՝ Ամասիա Իքշանոսեան Վարժա-
րանը զրկուեցաւ 1 թիւէն սկսեալ մինչեւ 11րդը:
Կրնաք Ա. Էֆ. Էնտիի վճարել:

Ոխ. — Պ. Էֆ. Տ. — Ստացանք, շնորհակալ
ենք:

Գայսէրի. — Տ. Նպ. Պ. — Ստացանք ձեր Գերա-
պատուութեան նամակն. պատասխանը կ'ստանաք:

25. — ՀԱՆԵԼՈՒԿ

Ձիւ լաւ ուտես:

Ձիւ լաւ չարես:

Ձիւ լաւ սիրես:

Ձայներնիս մէկ,

Բնութիւննիս երեք:

26. — ՀԱՆԵԼՈՒԿ

Ես մի բաւ եմ եռատառ,

Որոնք կ'ըլլան ածական.

Որք են հանելուկիս առաջին վանկ.

Երկրորդ վանկս է մի հայ տառ,

Որ է մասնիկ ածականաց փոքրիկ.

Իսկ երրորդս է չափ մը հինօրեայ,

Որք ամբողջովին կազմեն՝

Գոյական մ'որ ունին աշակերտք համայն:


ԱՐՏՕՆԱՏԵՐ — ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

ԱՐՄԷՆ ԱՌԻՍԻՆԵԱՆ

ՏՊԱԿՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Supplement to the
Journal of the
Royal Asiatic Society




Տպագրիչ եւ Փորագրիչ ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, ԷՍԿԻ ԶԱՊԹԻԷ ԶԱՏՏԷՍԻ, ԹԻԻ 61.

Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Ը Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Ի Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ՝ և թէ օր ըստ օրէ հասնող թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմրցելի աժանութեամբ գոհացում տալ նոյն իսկ էն խստապահանջ թէյի սիրահարներու։ ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւնները կը կատարուին ամենայն ճշդութեամբ։

Աժան, ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք անգամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, ձէլալ-Պէյ խանի կից թիւ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի չոխ մթերք մը։

Ա Ժ Ա Ն

Ա Ժ Ա Ն

Ա Ժ Ա Ն

ԱՌԱՋՆՈՐԴ

ՎԱՃԱՌԱԿԱՆԱՅ

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ

Ս Ի Մ Օ Ն Զ Է Օ Մ Լ Է Ք Ճ Ե Ա Ն

(ԺԻՐԱՅՐ ՇԻՐԱԿԱՅԻ)

Անհրաժեշտ ամէն վաճառակցի, գրազրի եւ առուստրով զբաղողներու։

Գին Բ. Հատորի 12 ղրշ. — Կանխիկ վճարողներու համար զեղջ 15 0/0։

Դիմել Ի. ԵՐԹԻՍ հասցէին

Հրատարակուեցաւ Բ. Հատորի երրորդ տետրակը։

ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԱՅՑԱՔԱՐԴԵՐՈՒ ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆԵՐԸ

Մէկ լեզուէ միջակ թուղթ	100 հատը	7 ղշ.
Երկու » » » » »	» » »	9 »
Երեք » » » » »	» » »	11 »
Մէկ » ընտիր » » »	» » »	8 »
Երկու » » » » »	» » »	10 »
Երեք » » » » »	» » »	12 »
Ոսկեգօծ եղերքներով ընտիր թուղթ	» » »	16 »
» » » գունաւոր » » »	» » »	17 »
» թրթրլը եղերք. ճերմակ » » »	» » »	17 »
» » » գունաւոր » » »	» » »	18 »

Թուրքերէն Սիւլիս, Թաալիւք եւ Բըզազ գրով փորագրեալ այցաքարդերուն համար՝ 12 ղրշ. աւելի ծախք մը վճարել պէտք է։ Լուսանկարով միասին տպագրեալ այցաքարդերուն 100 հատը 60 ղրշ.։

Գաւառներէ եղած յանձնարարութեանց համար թղթատարի ծախք չի պահանջուիր։ Վճարմունք կանխիկ են։

Հանրագիտակ ձեռքէ կը ծախուի Պոլսոյ մէջ հատ 40, իսկ գաւառաց մէջ 50 փարսյ։